



ՄՈՒՐԲ ՅԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

ՏՕՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

13 ՅՈՒՆԻՒԱՐ 2019

Կիրակնօրեայ Ընթերցումներ Էջ 1

Ծանուցումներ Էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

2.8-15

Զգոյշ եղէք, որ ոեւէ մէկը ձեր միտքը չգրաւէ իմաստասիրական տեսութիւններով եւ խաբեբայական

... մարդացած Քրիստոսի մէջ կը բնակի Աստուածային բնութեան ամբողջ լիութիւնը:

սին խօսքերով, որոնք մարդկային աւանդութիւններու եւ բնութեան ոյժերու վրայ կը հիմնուին եւ ո՛չ թէ Յիսուս Քրիստոսի վարդապետութեան

վրայ: Որովհետեւ մարդացած Քրիստոսի մէջ կը բնակի Աստուածային բնութեան ամբողջ լիութիւնը: Եւ դուք ձեր կեանքին լիութիւնը գտաք՝ միանալով անոր, որ գլուխն է ոգեղէն

Մկրտուելով՝ անոր հետ միասին թաղուեցաք, եւ անոր հետ ալ յարութիւն առիք, քանի որ հաւատացիք Աստուծոյ զօրութեան...

աշխարհի բոլոր իշխանութիւններուն ու պետութիւններուն: Հաւատքի ճամբով երբ Քրիստոսի միացաք, դուք ձեր մեղքերը թօթափեցիք եւ Քրիստոսի թլփատութեամբ ստացած եղաք

սրտի թլփատութիւնը: Մկրտուելով՝ անոր հետ միասին թաղուեցաք, եւ անոր հետ ալ յարութիւն առիք, քանի որ հաւատացիք Քրիստոսի Աստուծոյ զօրութեան, հետ Աստուծոյ որ զայն մեծեղ ալ ղեկներէն յարուցանեց: Քրիստոսի հետ Աստուած ձեզ ալ կենդանացուց, քանի որ դուք հոգեւորապէս մեռած էիք ձեր մեղքերուն պատճառով, որովհետեւ անթլփատ հեթանոսներ էիք: Այո՛, Աստուած ներեց մեր բոլոր յանցանքները եւ իր իշխանութեամբ ջնջեց մեր օրինազանցութեան համար մեզի դէմ արձակուած դատապարտութեան վճիռը, զայն խաչափայտին գամելով: Այսպիսով անիկա զինաթափ ըրաւ ոգեղէն աշխարհի իշխանութիւններն ու պետութիւնները, յայտնապէս խայտառակելով ու պարտութեան մատնելով զանոնք Քրիստոսի ձեռքով, անոր յարութեան ատեն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

2.21

Ութը օր ետք, երբ մանուկը թլփատուեալ ժամանակը հասաւ, Յիսուս կոչեցին զայն, այն անունով որ հրեշտակը տուած էր անոր՝ տակաւին Մարիամի որովայնին մէջ չյղացած:

ԱՂՕԹՔ

Գարլ Ռահներէ

Ա՛նդօթենք,
Հնորիքի եւ յաւիտենական կեանքի
Աստուած,
որ մեր մէջ անեցնես եւ զօրացնես յոյսը:
Արի մարդուն այս առաքիւնութիւնը պարգեւէ
մեզի,
ինքնավստահ մարդուն՝ այս ուժը,
անյողողող մարդուն՝ այս քաջութիւնը:
Թոյլ տուր որ միշտ քեզ տենչանք,
որ մեր կեանքին լրումն եւ անասիման.
Թոյլ տուր որ քեզի
եւ հաւատարմութեանդ ապաւինինք,
Թոյլ տուր որ միշտ
առանց տատամսելու քու զօրութեանդ
կառչինք,

ԱՅԵԼԵՅԷ՛Ք ԵԿԵՂԵՃՈՅԱ
ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՁՐ

ԵՒ ՁԵՐ ՀԱՔԱՆՈՒԹԻՒՆԸ յԱՅՏԵՅԷՔ
(like).

www.facebook.com/SourpHagopChurchMontreal

ԱՅԵԼԵՅԷ՛Ք ՆԱԵԻ
Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋԱՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՃՈՅ ԿԱՔԷՁՐ՝
www.sourphagop.net

Թոյլ տուր մեզի ունենալ այնպիսի՝ ոգի մը:
Ս. Հոգիիդ ներգործմամբ
երբ մեր մէջ կերպաւորես այնպիսի՝ ոգի մը,
ով մեր Տէրն ու Աստուածը,
պիտի ունենանք յոյսի առաքիւնութիւնը:
Յետ այնու,
մեր կեանքին ասպարէզը պիտի կարենանք
քաջութեամբ հանդերձաւորել,
սպա մեր մէջ պիտի բնակի
ցնծագին վստահութիւնը,
թէ ի զուր պիտի չվաստկինք,
եւ մեր աշխատանքը պիտի կատարենք
ստուգութեամբ, թէ դուն, ով Ամենակարող,
ըստ հայեցողութեանդ եղանակներուն
մեր մէջ եւ մեզմով,
եւ ուր որ մեր կարողութիւնը կը ձախողի՝
առանց մեզի կը գործես քու փառքիդ համար,
եւ մեր փրկութեան:
Յոյսդ զօրացուր մեր մէջ: Ամէն:

ՀՐԱՆՈՒՆԵՐՈՒՄ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել
Արժ. Տ. Գառնիկ
Աւ. Քինյ. Գոյունեանի.
514 909 5203 քիւին:

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհնէք փափաքող ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Աւ. Քինյ. Գոյունեանի,
հեռաձայնելով
514 909 5203 քիւին: